SEF INTERNATIONAL

Աշխատանքի հայտարարություն

Պաշտոն_ Ներքին աուդիտի օգնական/ Փորձնակ

Տևողություն_ 3 ամիս փորձաշրջան, լավագույն թեկնածուները կստանան աշխատանքի առաջարկ:

Պարտականություններ և պարտավորություն

Օգնել ներքին աուդիտի թիմին հետևյալում՝

- Վարկային պորտֆելի վերլուծություն՝ հայտնաբերելու համար որևէ խախտում
- Իրականացնել վարկային պորտֆելի և փաստաթղթերի ստուգումներ
- Այցելել փոքր ձեռնարկություններին և գյուղատնտեսական վարկերի հաճախորդներին թե՛ Երևանում, թե՛ մարզերում
- Իրականացնել մասնաճյուղերի դրամարկղերի ստուգումներ
- Իրականացնել Կազմակերպության գործընթացների, վարկային պրոդուկտների և մասնաճյուղերի կանոնավոր աուդիտ՝ համաձայն հաստատված ներքին աուդիտի պլանի,
- Պատրաստել զեկույցներ կազմակերպության ընթացակարգերի վերաբերյալ
- Գնահատել և փաստաթղթավորել ներքին վերահսկողության համարժեքությունը
- Առաջարկել բարելավումներ, ուղղումներ, ծախսերի կրճատման ռազմավարություն

Պահանջներ (խնդրում ենք նշել ձեր ինքնակենսագրականում)

- Առնվազն բակալավրի աստիճան՝ Հաշվապահություն, Տնտեսագիտություն, Մաթեմատիկա/Վիճակագրություն, Տվյալների վիճակագրություն, ՏՏ/Ճարտարագիտություն, բարձր առաջադիմությամբ
- Առնվազն 2 տարվա վարորդական իրավունք
- ՀՀ մարզերում աշխատանքային գործուղումների մասնակցելու հնարավություն

Լրացուցիչ որակավորում և փորձ

- Դասընթացներ/փորձ տվյալների վերլուծության, նորարարության, ժամանակակից էլեկտրոնային վճարումների համակարգերի իմացության
- Գյուղատնտեսության ոլորտի իմացությունն առավելություն է

Անհրաժեշտ հմտություններ

- Հայերեն, անգլերեն լեզուների գերազանց իմացություն
- Ճնշման տակ աշխատելու կարողություն
- Տվյալների վերլուծության հմտություններ
- Միկրոֆինանսների և բանկային գործառնությունների իմացություն
- ՏՏ ընդհանուր գիտելիքներ
- Գերազանց կազմակերպչական և ղեկավարման հմտություններ
- Գերազանց գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ, տարբեր համայնքների հետ արդյունավետ հաղորդակցվելու հմտություն

Համակարգչային գիտելիքներ

- MS փաթեթի լավ իմացություն,
- Վիճակագրական ծրագրային փաթեթի, Python or R լեզուների իմացությունն առավելություն է

Դիմելու ընթացակարգ

Ցանկացողները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները internalauditor@sef.am էլեկտրոնային հասցեին:

Վերջնաժամկետ՝ 01 մարտի 2020թ.: